ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«27» մայիսի 2012թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 32

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ԶՈՒԳԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի զ) կետը և 7-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գլուխ 1-ի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի N 156-Ն որոշումը և ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 876-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցի 12-րդ կետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացվելիք տարածական կազմակերպման միջոցառումներ և ջրածածկման և /կամ/ ողողման ենթակա տարածքներում առկա օրինական կառույցներն ափապաշտպան կամ ինժեներական այլ լուծումների կիրառմամբ պահպանելու հնարավորություններ» ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց)՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝
Սևանա լճի ափամերձ տարածքներում քաղաքաշինության բնագավառի գործունեության շրջանակներում հաշվի առնել Ուղեցույցի դրույթները:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

«27» 11 2012թ

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քաղաքաշինության նախարարի «Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացվելիք տարածական կազմակերպման միջոցառումների ուղեցույցը հաստատելու մասին» հրամանում նշված հավելվածն իրենից ներկայացնում է «Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացվելիք տարածական կազմակերպման միջոցառումներ և ջրածածկման և /կամ/ ողողման ենթակա տարածքներում առկա օրինական կառույցներն ամփապաշտպան կամ ինժեներական այլ լուծումների կիրառմամբ պահպանելու հնարավորություններ» ուղեցույցի նախագծային փաստաթղթերը՝ 68 էջ տեքստային /2 գիրք/ և 81 թերթ գրաֆիկական /5 ալբոմ/ ընդհանուր ծավալով, որը հրամանին կցել տեխնիկապես հնարավոր չէ և գտնվում է աշխատակազմի քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչությունում:

քաղաքաշինության քաղաքականության
և տարածական պլանավորման
վարչության պետ՝ Ս. Մաթևոսյան